№ 38 ՄԱՐՏԻ 11 (23) 1878 ՄԱՐՏԻ 11 (23) № 38

ՅՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Գատուրեանի խանութում

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին քաղաքական անցքերը։—Ներքին տեսութիւն։ Նէրնա Անդրէեվսկու սպանման գործը։ Նամակ Մոսկվայից։ Երկրորդ փոխառութեան պիրաժ։ — Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։—Խառն լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։ — Յայտարարութիւններ։ — Տեղեկացոյց։ —Բանասիրական։ Մատենագրութիւն։

ՎԵՐՋԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ

—

Խաղաղութեան պայմանները ստորագրելուց յետոյ մինչև այժմ եղած քաղաքական գործերից աչքի է ընկնում այն ջղջաբերականը, որով դիմեց Ռումինիայի կառավարութիւնը եւրոպական պետութիւններին և որտեղ ասված էր, ինչպէս հաղորդեց մեզ հեռագիրը, որ Ռումինիան իր երկիրներից մէկը կը տայ մի այլ պետութեան միայն այն ժամանակ, երբ ոյժ կը գործ դնեն, այսինքն, երբ Ռումինիան պատերազմելով իր երկիրը պաշտպանելու համար, կը յաղթվի և կը խոնարվի միայն զէնքի աջողութեան առաջ։

Այսպիսով Ռումինիան որոշ յայտնում է, որ համաձայն չէ իր Բեսարաբիա երկիրը փոխել Դոբրուջայի հետ և որ այդ փոփոխութիւնը, այսինքն Բեսարաբիան Ռուսաստանին տալը վնաս է ամբողջ Եւրոպայի շահերին։

Ինքն ըստ ինքեան Ռումինիայի այս յայտնութիւնը աննշան է, բայց եթէ օրինաւոր քննենք գործը Ռումինիայի բացատրութիւնը, եթէ եւրոպական պետութիւնները ընդունեցին, կարող է ոչ թէ միայն մեծ դժուարութիւնների, այլ և պատերազմի վերանորոգվելու պատճառ դառնալ։

Ռուսաստանը իր բազմաթիւ հպատակների արիւնը թափեց պատերազմական դաշտի վրա նրա համար, որ Թիւրքիահպատակ քրիստոնեաների ծանր վիճակը թեթեւացնէ։ Այդ քրիստոնեաների թիւումն են և բոլգարացիք, որոնց համար, ինչպէս երևում է հաշտութեան պայմաններից, Ռուսաստանը պահանջեց և ստացաւ ինքնավարութիւն։

Բոլգարիան պէտք է այսուհետև լինի մի իշխանութիւն, ինչպէս է Սերբիան և ունենայ իր իշխանը, որ եւրոպական թագաւորող տներից ոչ մէկին չը պատկանէր։

Ռուսաստանը պէտք է ամբողջ երկու տարի հսկէ, մինչև Բոլգարիայի նոր իշխանութիւնը կազմակերպվի։ Ռուսաց զօրքերից 50000 զինուոր պէտք է մնան Բոլգարիայում երկու տարի, որ պաշտպանեն այդ երկիրը եթէ հարկաւոր լինի։ Այն հարկը, որ Բոլգարիան պէտք է տայ Թիւրքիային մի քանի տարի պէտք է մտնի ռուսաց գանձարանը Թիւրքիայի վճարելի պատերազմական ծախսերի հաշուում և վերջապէս Ռուսաստանը ոչ թէ միայն իր երկու տարվայ Բոլգարիայի հոգաբարձու լինելու ժամանակ այլ և միշտ պէտք է ազատ ճանապարհ ունենայ մտնելու այդ երկիրը և հարկաւոր դէպքում նրան պաշտպանելու։ Մի խօսքով Ռուսաստանին հարկաւոր է Բոլգարիայի սահմանակից լինել, Ռուսաստանին հարկաւոր է Դունայ գետի բերանի մօտ երկիրներ ունենալ։ Իսկ այդ երկիրը, որ միւսներից աւելի յարմար է՝ Ռումինական Բեսարաբիան է։ Ռումինիան ինքն ոչինչ չէ կարող անել և թէպէտ իր ջղջաբերականի մէջ յայտնում է, որ միայն ոյժի առաջ կը խոնարվի, բայց եթէ ինքն մէնակ լիներ ոչ թէ միայն չէր համարձակվի ոյժ փորձել, այլ մինչև անգամ նա չէր էլ ասի, չէր կամայ, հանքային հարստութիւններ կան, բայց նա տխուր տպաւորութիւն է գործում ճանապարհորդի վրա։ Մի ժամանակ այնտեղ գոյութիւն ունէին բազմաթիւ ծաղկեալ քաղաքներ, և երկիրը աշխատասէր ժողովրդով էր բնակեցրած։ Իսկ ներկայ ժամանակում, Եփրատից մինչև Բոսֆորը անշարժութիւն, աղքատութիւն և յուսահատութիւն է թագաւորում։ Միայն մի մի տեղ կերևայ ծովի վրա առագաստ, ափի վրա մի մի տեղ կը պատահի գիւղ, իսկ առևտրական ճանապարհներ բոլորովին չը կան։ «Դուք պատճառն էք կամենում իմանալ, և ամենքից կը ստանաք մի պատասխան։ Վատ կառավարութիւնը է պատճառը, կամ աւելի լաւ ևս ոչինչ կառավարութիւն չը կայ, կայ իշխանութիւն, որ ոչինչ չէ անում իր հպատակների համար, և մինչև անգամ արգելք է դնում նրանց առաջ, երբ նրանք կամենում են, յարմար առիթ պատահելիս, մի բան անել իրանց բարօրութեան համար։»

Աշխատելով Ռուսաստանի վերաբերութեամբ անկողմնապահ լինել, Բրայսը իր գրքում ապացուցանում է արևմտեան մամուլի յայտնի մասի անհիմնաւորութիւնը, որ իբր թէ ներկայ պատերազմում Թիւրքիայի հետ, Ռուսաստանը կամենում է երկիրներ ձեռք բերել։ «Անդրկովկաս և Արարատ» գրքի հեղինակը հաղորդում է, որ ճանապարհի վրա նա տեսաւ հողի ընդարձակ տարածութիւններ, որոնք մեծ մասամբ չեն մշակված։ Այս հողը առ հասարակ շատ պտղատու է, և Բրայսի կարծիքով, նոյնքան բազմաթիւ աղգաբնակութիւն կը պահանջէ, որքան որ Ռուսաստանը ներկայումս ունի։ «Ի՞նչ բանի էլ կարիք ունենար Ռուսաստանը—գրում է Բրայսը—նա կարիք չէ զգում երկրի մէջ և յարմար առիթ չէ պտուում միացնել իր հետ Բոլգարիա և Հայաստանը կամ մի որ և իցէ ուրիշ երկիր ձեռք բերելու նպատակով, իր աւելորդ որդոց բնակեցնելու համար»։ Մի և նոյն ժամանակ հեղինակը հաւատում է որ Ռուսաստանին մեծ ապագայ է սպասում։ «Բնակայութեամբ գնալով անցեալից դէպի ապագան, դուք ակամայ մտածում էք այն բանի վրա, թէ ինչ դրութեան մէջ կը լինի այս ընդարձակ և պտղատու երկիրը մի երկու դար անցնելուց յետոյ, երբ նա բոլորը մշակված կը լինի, երբ կը ծնվեն բնակեցրած քաղաքներ, երբ կը բացվեն քարածուխի հանքեր և պտղաբեր կը դառնան անապատ մնացած դաշտավայրերը։ Եթէ Ռուսաստանը այն ժամանակ կը լինի այնպիսի Ռուսաստան, որպէս այժմս է, ազգը մի կրօն և մի զգացմունք կունենայ, որին կառավարելիս լինի մի կամք, այն ժամանակ նա կը դառնայ ահարկու պետութիւն աշխարհի մէջ»։ Իսկ ինչ վերաբերում է մեր հայրենի բարքին, որին ճանապարհորդները արևելեան են կոչվում, Բրայսը շատ քիչ է խօսում դրա վրա։ Ռուսաց քաղաքների և սովորութիւնների միայն արտաքին նշաններն են յիշեցնում արևելքը։ Ամենից շատ Ռուսաստանը նմանվում է Ամերիկային, այս նմանութիւնը հեղինակը նկատեց առաջին անգամ Վոլգայի վրա։ Հետևելով այս մտքին, Բրայսը նշանակում է թէ պատահական նմանութեան գծերը, նոյնպէս և այն գծերը որոնք իսկական նշանակութիւն ունեն։ Երկու երկիրների նկարագրութիւնների մէջ նա շատ հետաքրքրական բաներ է հաղորդում։

«Անդրկովկաս և Արարատ» գրքի հեղինակի մեր հայրենիքի մասին յայտնած կարծիքները հետաքրքիր երևոյթ են կազմում։

Բրայսը Ռուսաստան եկաւ մի փոքր նախապաշարմունք ունենալով մեր դէմ։ Երբ նա սկսեց հաշի տակ ձգել մեր հայրենիքի ծանօթութիւնից դուրս բերած քաղաքական տպաւորութիւնները, այն ժամանակ նա ստիպված էր խոստովանել, որ Ռուսաստանը պատուաւոր կերպով է կատարում իր պարտականութիւնները իր անդրկովկասեան հպատակների վերաբերութեամբ, ազատում է տարուկներին, կանոնաւոր տեղական դատարաններ է տալիս նրանց, առաջ է տանում արուեստները, կապիտալին ապահովութիւն տալով։ Ինչ որ Թիւրքաց կայսրութեան է վերաբերում Բրայսը պարզ տեսնում է ամեն տեղ կործանման նշաններ։ Բայց նրա կարծիքով նրա աւերակների վրա կարող է ծնվել հաստատ թագաւորութիւն։ Վերջաբանի մէջ հեղինակը հաստատ կերպով ապացուցանում է իր հայրենակիցներին որ ռուսների Կ. Պոլիս գրաւելը չէ կարող այնքան վնաս տալ Անգլիային, որքան կարող է վնաս պատճառել այդ գրաւելուն արգելելու համար սկսած դժուար և ծանր պատերազմը։

* * *

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Transcaucasia and Ararat»
By James Bryce

Ռուսաստանի վերաբերութեամբ հրատարակած անգլիական ամենահետաքրքիր հեղինակութիւնների թւում, ասում է «Голосъ» լրագիրը, կարելի է Ջէմս Բրայսի «Անդրկովկաս և Արարատ» (Transcaucasia and Ararat) վերնագրով գիրքը համարել։ Հեղինակը յայտնի է գիտական աշխարհին իր «Սրբազան Հռոմէական Կայսրութիւն» անունով հեղինակութեամբ. նրա այս նոր գիրքը կարող է աւելի հաստատել նրա հռչակաւոր անունը, որովհետև այս գրքի մէջ նա յայտնվում է օրինաւոր, հետաքրքրող և խելօք պատմիչ։

Ջէմս Բրայսը առաջաբանի մէջ ասում է որ սրան շատ հետաքրքրում էր Արարատ սարը, «որը յայտնի է ամենքին, բայց որի մասին գրված է համեմատաբար շատ քիչ» և վճռեց բարձրանալ այս երևելի լերան վրա։ Այս նպատակով նա ստիպվեցաւ մեծ ճանապարհորդութիւն սկսել, և 1876 թւի աշնան նա եկաւ Պետերբուրգ, որտեղից նա անցաւ Կովկաս և Թիւրքիա։ Իր ճանապարհորդական տպաւորութիւնները նա հրատարակեց առաջին այն պատճառով որ զինուորական գործողութիւնները անսպասելի նշանակութիւն տուեցին նրա այցելած երկիրներին, և երկրորդ իր բարեկամների խնդրանօք, որոնք հաւատացած էին որ Արարատի վրա բարձրանալը շատ հետաքրքրական կը լինի բոլորի համար։

Բրայսը ասում է, որ երբ նա Պետերբուրգ եկաւ, խորհուրդ չէին տալի նրան Ռուսաստան ճանապարհորդել։ Ասում էին, որ նա շատ վատ ժամանակ է ընտրել, որ ժողովուրդը սաստիկ զրգռված է Անգլիայի դէմ և այս պատճառով անգլիացի ճանապարհորդը կարող է հաւատացած լինել որ նրա հետ կոպիտ կերպով կը վարվեն, և որ նրան մինչև անգամ կը վիրաւորեն։ Բայց Բրայսին ոչինչ բան չը պատահեց։ Նա վկայում է, որ թէ Ռուսաստանում և թէ Կովկասում նրա հետ շատ քաղաքավարի էին վարվում։ Մինչև անգամ Արարատի վրա բարձրանալու ժամանակ նրան ուղեկցում էին կօզակներ, որոնց պարտաւորեցրել էր առաջնորդել նրան, լերան ստորոտում գտնվող Արալիխ կայարանի գլխաւորը։ Բրայսը մեծ դժուարութիւններ կրեց բարձրանալու ժամանակ, նրա ուղեկիցները ուժաթափ եղան և հրաժարվեցան նրան հետևել, այնպէս որ նա միայնակ հասաւ գագաթը, մինչև անգամ առանց առաջնորդի—որը բաւական համարձակ գործ է այդպիսի անյայտ լերան վերաբերութեամբ, որպիսին Արարատն է։ Բայց Բրայսը ասում է որ իր այդ համարձակութեան փոխարէն օրինաւոր կերպով վարձատրվեց, նա գագաթից կարողացաւ դիտել, թէ և մասներով, բոլոր շրջապատող տարածութիւնը։ Բանը նրանումն է, որ Արարատի գագաթը ամառ ժամանակ և աշնան ամիսներին լուսանալուց մի փոքր ժամանակ առաջ շրջապատված չէ լինում ամպերով։ Բայց քիչ քիչ երբ որ արեգակի ճառագայթները սկսում են տարածվել հովիտների վրա, տաքացող օդը բարձրանում է լերան զառ ի վայրերի վրա և հասնելով ձիւնային չերթին թանձրանում է և ամպեր է գոյացնում։ Հէնց այս ամպեր են, որ արեգակը ծագելուց երեք կամ չորս ժամ յետոյ գոյանալով, շրջապատում են լեառը մինչև արեգակի մայր մտնելը։ Նրանք բոլորովին չեն անհետանում այլ փոխում են տեղը։ Բրայսը հասաւ գագաթը օրվայ 2 ժամ և 25 րոպէին։ Նրա բաղդից սաստիկ հողմը մաքրում էր օդը երբեմն մի և երբեմն միւս կողմից, այնպէս որ ճանապարհորդը կարողացաւ իր առաջ բացված տեսարաններով զուարճանալ։

Բրայսը Արարատից Երևանով վերադարձաւ Թիֆլիս և չոգենաւով Փոթիից ճանապարհ ընկաւ Կ. Պոլիս։ Իր «Անդրկովկաս և Արարատ» գրքում նա բացի Արարատի, և այս լերան վրա բարձրանալու նկարագրութենից, հաղորդում է Անդրկովկասի և Փոքր Ասիայի մի մասի վերաբերութեամբ իր սեփական և զանազան հեղինակութիւններից քաղած բազմաթիւ տեղեկութիւններ։ Բրայսը Անդրկովկասը համարում է բոլոր մեր ասիական երկիրներից ամենահարուստ և աշխարհագրական դիրքով ամենանշանաւոր երկիր։ Փոքր-Ասիան — նոյնպէս հարուստ երկիր է, ասում է Բրայսը, բնութեան ամեն բարիքներ ունէ, պտղատու հող, փափուկ կլիմայ, հանքային հարստութիւններ կան, բայց նա տխուր տպաւորութիւն է գործում ճանապարհորդի վրա։ Մի ժամանակ այնտեղ գոյութիւն ունէին բազմաթիւ ծաղկեալ քաղաքներ, և երկիրը աշխատասէր ժողովրդով էր բնակեցրած։ Իսկ ներկայ ժամանակում, Եփրատից մինչև Բոսֆորը անշարժութիւն, աղքատութիւն և յուսահատութիւն է թագաւորում։ Միայն մի մի տեղ կերևայ ծովի վրա առագաստ, ափի վրա մի մի տեղ կը պատահի գիւղ, իսկ առևտրական ճանապարհներ բոլորովին չը կան։ «Դուք պատճառն էք կամենում իմանալ, և ամենքից կը ստանաք մի պատասխան։ Վատ կառավարութիւնը է պատճառը, կամ աւելի լաւ ևս ոչինչ կառավարութիւն չը կայ, կայ իշխանութիւն, որ ոչինչ չէ անում իր հպատակների համար, և մինչև անգամ արգելք է դնում նրանց առաջ, երբ նրանք կամենում են, յարմար առիթ պատահելիս, մի բան անել իրանց բարօրութեան համար։»

Աշխատելով Ռուսաստանի վերաբերութեամբ անկողմնապահ լինել, Բրայսը իր գրքում ապացուցանում է արևմտեան մամուլի յայտնի մասի անհիմնաւորութիւնը, որ իբր թէ ներկայ պատերազմում Թիւրքիայի հետ, Ռուսաստանը կամենում է երկիրներ ձեռք բերել։ «Անդրկովկաս և Արարատ» գրքի հեղինակը հաղորդում է, որ ճանապարհի վրա նա տեսաւ հողի ընդարձակ տարածութիւններ, որոնք մեծ մասամբ չեն մշակված։ Այս հողը առ հասարակ շատ պտղատու է, և Բրայսի կարծիքով, նոյնքան բազմաթիւ աղգաբնակութիւն կը պահանջէ, որքան որ Ռուսաստանը ներկայումս ունի։ «Ի՞նչ բանի էլ կարիք ունենար Ռուսաստանը—գրում է Բրայսը—նա կարիք չէ զգում երկրի մէջ և յարմար առիթ չէ պտուում միացնել իր հետ Բոլգարիա և Հայաստանը կամ մի որ և իցէ ուրիշ երկիր ձեռք բերելու նպատակով, իր աւելորդ որդոց բնակեցնելու համար»։ Մի և նոյն ժամանակ հեղինակը հաւատում է որ Ռուսաստանին մեծ ապագայ է սպասում։ «Բնակայութեամբ գնալով անցեալից դէպի ապագան, դուք ակամայ մտածում էք այն բանի վրա, թէ ինչ դրութեան մէջ կը լինի այս ընդարձակ և պտղատու երկիրը մի երկու դար անցնելուց յետոյ, երբ նա բոլորը մշակված կը լինի, երբ կը ծնվեն բնակեցրած քաղաքներ, երբ կը բացվեն քարածուխի հանքեր և պտղաբեր կը դառնան անապատ մնացած դաշտավայրերը։ Եթէ Ռուսաստանը այն ժամանակ կը լինի այնպիսի Ռուսաստան, որպէս այժմս է, ազգը մի կրօն և մի զգացմունք կունենայ, որին կառավարելիս լինի մի կամք, այն ժամանակ նա կը դառնայ ահարկու պետութիւն աշխարհի մէջ»։ Իսկ ինչ վերաբերում է մեր հայրենի բարքին, որին ճանապարհորդները արևելեան են կոչվում, Բրայսը շատ քիչ է խօսում դրա վրա։ Ռուսաց քաղաքների և սովորութիւնների միայն արտաքին նշաններն են յիշեցնում արևելքը։ Ամենից շատ Ռուսաստանը նմանվում է Ամերիկային, այս նմանութիւնը հեղինակը նկատեց առաջին անգամ Վոլգայի վրա։ Հետևելով այս մտքին, Բրայսը նշանակում է թէ պատահական նմանութեան գծերը, նոյնպէս և այն գծերը որոնք իսկական նշանակութիւն ունեն։ Երկու երկիրների նկարագրութիւնների մէջ նա շատ հետաքրքրական բաներ է հաղորդում։

«Անդրկովկաս և Արարատ» գրքի հեղինակի մեր հայրենիքի մասին յայտնած կարծիքները հետաքրքիր երևոյթ են կազմում։

Բրայսը Ռուսաստան եկաւ մի փոքր նախապաշարմունք ունենալով մեր դէմ։ Երբ նա սկսեց հաշի տակ ձգել մեր հայրենիքի ծանօթութենից դուրս բերած քաղաքական տպաւորութիւնները, այն ժամանակ նա ստիպված էր խոստովանել, որ Ռուսաստանը պատուաւոր կերպով է կատարում իր պարտականութիւնները իր անդրկովկասեան հպատակների վերաբերութեամբ, ազատում է տարուկներին, կանոնաւոր տեղական դատարաններ է տալիս նրանց, առաջ է տանում արուեստները, կապիտալին ապահովութիւն տալով։ Ինչ որ Թիւրքաց կայսրութեան է վերաբերում Բրայսը պարզ տեսնում է ամեն տեղ կործանման նշաններ։ Բայց նրա կարծիքով նրա աւերակների վրա կարող է ծնվել հաստատ թագաւորութիւն։ Վերջաբանի մէջ հեղինակը հաստատ կերպով ապացուցանում է իր հայրենակիցներին որ ռուսների Կ. Պոլիս գրաւելը չէ կարող այնքան վնաս տալ Անգլիային, որքան կարող է վնաս պատճառել այդ գրաւելուն արգելելու համար սկսած դժուար և ծանր պատերազմը։

* * *

էլ յայտնի իր այդպիսի վճիռը։

Այս հարցը միւսների հետ կը քննվի Բերլինում լինելու կոնգրէսի մէջ և նայելով թէ կոնգրէսը ինչպէս կը վերաբերվի խնդրին՝ կը պաշտպանէ արդեօք Բուլգարիայի վճիռը, թէ ոչ՝ ահա այն հանգամանքը, որ կարող է կամ Եւրոպայի մէջ խաղաղութեան հաստատելու պատճառ լինել, կամ աւելի զայրացած և արիւնահեղ պատերազմ յարուցանել, քան թէ տեսել ենք մինչև այժմ։

Այժմեան կոնգրէսը այն չէ, ինչ որ էր Կ. Պոլսի կոնֆերէնցիան։ Այժմեան ներկայացուցիչներին լիազօր իրաւունքներ են տուած իրանց կառավարութիւններից, իսկ գրեթէ բոլոր երկիրների ներկայ կառավարութիւնները կրեդիտ են ստացել, որ կարողանան համարձակ գործել, երբ հարկաւոր լինի մինչև անգամ կարողանան պատերազմ յայտնել։ Ահա այժմեան գործերի դրութիւնը Եւրոպայի մէջ։

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԻՆԱ ԱՆԴՐԷԵՎՍԿՈՒ ՍՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԸ

Այրպիսի սաստիկ, որոշ և մանրաման իրողութեանց վրա հիմնված մեղադրութեան դէմ, մեղադրեալների պաշտպաններից Զիստուա եղբայրների պաշտպան իշխան Օրբէլեանին սկսեց մեծաւորապէս այսպէս։

Պ. պ. դատաւորներ, պաշտպանի խնդիրը ներկայ հանգամանքում շատ դժուար խնդիր է, նա պիտի հերքի արմատական կերպով (коренным образомъ) այն բոլոր յայտնված և շատերի համար ընդունված, իբրև համոզմունք, իրողութիւնները որոնք պարզվեցին այսքան օրուայ դատաստանական քննութեան ժամանակ և որոնց հիման վրա իմ պաշտպանութեանը յանձնված մեղադրեալներին միայն մի ճանապարհ է մնում այն է տաժանական պատիժ։

Մեղադրական ակտը գրված է այնպէս, որ նրա տակ մեղադրական իրաւունքը ստորագրել է վճռապէս՝ աքսորել Սիբիր, տաժանական պատժին դատապարտելով։

Ես ինքս պիտի խոստովանեմ, պ. պ. դատաւորներ որ անցեալ օրը երբ լսեցի պ. Բէլեկի (երբեմն աւակ պօլիցմէյստրի) անվրդով, անկողմնապահ և համոզիչ վկայութիւնը, թէ ինչպէս մեղադրեալներից՝ Զուրաբ Քօրիձէն և Իվան Մէչլաձէն խոստովանել էին նրան յանցանքի մանրաման հանգամանքները, ես յուսահատվեցի և վճռեցի իմ մէջ, որ անկարելի է այլ ևս պաշտպանել այն մարդկանց, որոնց ճակատին արդէն գրած է տաժանական վճռի բոլոր սարսափելի ապագան։

Բայց երբ փոքր ինչ առանձնացայ և թերթելով մեղադրական ակտը, հասայ ոստիկան Լօլաձէի ցոյցերին, խոստովանում եմ նմանապէս պ. պ. դատաւորներ, որ ես նոր ոյժ առայ, նոր զօրութիւն զգացի իմ մէջ, ես նորից համոզուեցի որ իմ կլիէնտները այս հանգամանքում անմեղ են, ճշմարիտ են, որ պէտք է պաշտպանել նրանց, ճշմարտութիւնը լոյս հանելու համար։

Մեղադրական իրաւունքի համար որոշ և պարզ է որ Նինա Անդրէեվսկին «սպանված է», ուրեմն նրան հարկաւոր է ապացուցանել թէ «որտեղ» և «երբ»։ Այդ իրողութիւնը հաստատելու համար նմանապէս հարկաւոր է նրան հաստատել որ Նինա Անդրէեվսկին «չէր կարող խեղդվել լողանալու ժամանա», այլ «սպանված գցած է ջուրը։

Ապացոյց այդ իրողութեան նա առաջ է բերում այն հանգամանքները որ 1) նեղ, ջրոտ և ցեխոտ քարաժայռ ճանապարհով Նինան չէր կարող իջնել լողանալու, 2) որ եթէ իջնէր անգամ նա պիտի ցեխոտեր իր կօշիկները 3) որ անկարելի է հաւատալ որ Նինան կարողանար կամ ցանկանար լողանալ առհասարակ, նաև գիշերուայ ուշ ժամանակին, վերջապէս՝ 4) որ դիտութիւնը, բժշկների վկայութիւնը կասկածանքի տեղ չեն տալի, որ օրիորդ Նինան «սպանված գցած է ջուրում»։

Առաջին հարցի մասին պաշտպան իշխան Օրբէլեանին նկատեց՝ որ դատարանը լսեց թէ ինչպէս Նիկոլայէվի (Զիստուայի բանտարկութեան ժամանակ Շէրվաշիձէի տան կառաւարիչ) 11 տարեկան աղջիկը վազելով գնում էր այդ նեղ, ցեխոտ և ջրոտ ճանապարհով, վերդրօներով ջուր էր կրում, որ կօշիկները կարող էին մաքուր մնալ, որովհետև այդ երևակայական ցեխոտ, ջրոտ և քարաժայռ ճանապարհը այն տեսակ աղանման հողի բնաւորութիւն ունի, որ նրա վրա անցնելուց յետոյ, ոչինչ ցեխի հետք չէ կարող մնալ շորերի վրա և կօշիկների տակ։ Մինչև անգամ կարող էին կանաչ խոտի հետքեր երևալ կօշիկի տակ, որովհետև այն ջուրը որ հոսում է այդ նեղ ճանապարհով նա աղբիւրի ջուր է և ուրեմն նրա մէջ միշտ գտնվում է կանաչ ջրալի խոտի նման մէկ բան որ կարող էր կպչել կօշիկների տակ։ Որ Նինան կարող էր և կը ցանկանար լողանալ, պաշտպանի կարծիքով պարզ է, այն հանգամանքներից որ Նինան Օքրօղնա գիւղում գտնված ժամանակ յայտնել է ցանկութիւն լողանալու և որ առհասարակ նա այնպիսի ինքնակամ և անկախ բնութեան տէր աղջիկ է եղել, որ նա կարող էր յանկարծ զգալ մէկ ցանկութիւն լողանալու և առանց մօրը յայտնելու գնալ և լողանալ։

Իսկ ինչ կը վերաբերի դիտութեանը, բժշկների վկայութեանը, թէ ջրի մէջ գտնուած դիակի վերա նշմարված նշաններից պիտի եզրափակել որ այդ նշանները, կամ խախտութիւնները, ստացված են մարմնի դեռ ևս կենդանութեան ժամանակ, պ. պաշտպանը կասկածում է յայտնելով որ շնչասպառութեան հետևանքները մահից յետոյ միշտ միատեսակ են, չը նայելով թէ նա կարող էր պատճառված լինել ջրից դուրս թէ ջրի մէջ, կենդանութեան թէ անշնչացած ժամանակ, միով բանիւ իշխան Օրբէլեանին չէ ուզում կուլորէն հաւատալ բժշկների վկայութեան, մանաւանդ որ նրանք խոստովանում են որ շնչասպառութիւնից պատճառած մահուան հետևանքները միատեսակ են՝ թէ կողմնակի ոյժից խեղդվածի թէ ջրի մէջ խեղդվածի համար։

Այսպիսի եղանակով հիմնված պաշտպանութիւնը շարունակելուց յետոյ, իշխան Օրբէլեանին յայտնեց որ նրան յանձնել են մեղադրվածները յայտնելու դատարանին, որ եթէ նա չի կարողանայ հերքել սպանման իրողութիւնը, այնուհետև նոքա պատրաստ են տաժանակիր տանջանքի գնալու Սիբիր։

«Թող փորձեն դատաւորները, աւելացրեց պաշտպան Օրբէլեանի, կազմել մեղադրական ակտ և նրան ստորագրել տալ էկսպերտ-բժշկներին,—և ես հաւատացած եմ որ նրանք վստահութիւն չեն ունենայ ստորագրելը»

Սրանից յետոյ խօսեց Գաբիսօնիայի պաշտպան, պ. Տիխամիրօվը որը սկզբից մինչև իր ճառի վերջը զմայլեցրեց, ապշեցրեց հասարակութիւնը իր ճարտարախօսութեան ձիրքով, չը նայելով որ նա կրկնում էր մի և նոյնը ինչ որ Զիստուաների պաշտպանը և կարելի է ասել նա առաւել այս վերջիններին էր պաշտպանում, քան թէ իր կլիէնտին։ Նա աւելացրեց իր ճառի վերջերում հետևեալ խօսքերը։ Եթէ անգամ յանցանք է պատահած, օրիորդին սպանել են և գցել ջուրը, ի՞նչու անպատճառ պիտի կարծել որ յանցաւորները սրանք պիտի լինեն։»

Յետոյ պրօկուրօրի և պաշտպանների մէջ մի քանի մաքեր դարձեալ բացատրելուց յետոյ դատարանը դիմեց մեղադրվածներին և հարցրեց թէ ունեն արդեօք մի բան աւելացնելու իրանց պաշտպանութեան համար։

Դաւիթ Զիստուան պատասխանեց՝

—Պ. պ. դատաւորներ, ես խնդրում եմ ձեզ զննաւորվել ձեր խղճմտանքի ամբողջ ոյժովը և դուրս բերել մի վճիռ, որ չը բարձէր մի աւելորդ մեղք ձեր խղճմտանքի վրա։ Դուրս բերէք, պ. պ. դատաւորներ մի վճիռ որ արդարացնէ անմեղ մարդկանց։

Նրանից յետոյ Նիկոլայ Զիստուան վերկացաւ։

—Ես ոչինչ չունեմ աւելացնելու, ասաց նա, քանի որ պ. պրօկուրօրն էլ իմ մասին ոչինչ չէ խօսում։

Եւ վերջապէս Պէտրոս Գաբիսօնիան դիմեց դատաւորներին։

—Ես տանջվել եմ ի զուր ամբողջ տարի ու կէս։ Եւ միթէ մի ուսում առած ստուդէնտ, եթէ կամենար յանցանք գործել, կը յայտնէր ինձպիսի մարդուն իր դաղտնիքը, մի մարդուն որ միայն հինգ օր էր Անդրէեվսկիների տանը։ Նինան և Դաւիթը ինչպէս քոյր ու եղբայր էին վարվում միմեանց հետ, միասին թէյ էին խմում, և միթէ Դաւիթը կը սպանէր նրան։

Դատաւորները հեռանալուց յետոյ դուրս են բերում հետևեալ հարցերը։

1) Նինա Անդրէվսկին ենթարկվեցաւ արդեօք բռնի ոյժին և սպանման։

2) Եթէ ենթարկվեցաւ մեղաւոր է արդեօք այդ յանցանքի մէջ Դաւիթ Զիստուան։

3) Եթէ մեղաւոր է համաձայնացրել է նա արդեօք և ուրիշներին գործելու իր հետ այդ յանցանքը։

4) Մեղաւո՞ր է արդեօք Նիկոլայ Զիստուան։

5) Մեղաւոր է արդեօք Պետրոս Գաբիսօնիան։

6) Եւ եթէ մեղաւոր են, արդեօք դրել են որոգայթ Անդրիեվսկիների տան խոհանոցում, իրանց միտքը իրագործելու համար։

Նոյն օրը կիրակի մարտի 5-ին վերջացաւ այդ խորհրդաւոր գործի քննութիւնը և մօտաւորապէս $4^1/_2$ ժամին դատաւորները դուրս բերին հետևեալ վճիռը։

«Դաւիթ Զիստուային, 29 տարեկան զրկել բոլոր իր իրաւունքներից և ենթարկել տաժանակիր պատժի 20 տարի ժամանակով և յետոյ դատապարտել յաւիտենական կեցութեանը Սիբիրիայում։

«Պետրոս Գաբիսօնիային, 25 տարեկան, զրկել նմանապէս բոլոր իրաւունքներից և ենթարկել տաժանակիր պատժի 10 տարվայ ժամանակով և յաւիտենական կեցութեանը Սիբիրիայում։

«Նիկոլայ Զիստուային արդարացնել։»

Եւ իսկոյն դուրս բերին այս վերջինին ժանդամների միջից։

Գ. Զմշկեան

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՑԻՑ

Փետրվարի 26-ին

Ամիս 24-ին տեղիս հայ ուսանողները տուին մի ներկայացումն յօգուտ հայ աղքատ ուսանողների Սեկրետարօվի փոքրիկ թատրոնում։ Ցուին «Դիւցաղն Մխիթար» պ. Խալաթեանցի հեղինակութիւնը, նոյնպէս «Вспышка у домашняго очага» և «Էս էլ ձեզ մօցիքլութիւն»

Ես կը ցանկայի ասել մի քանի խօսք «Մխիթար Դիւցաղնի» վրա, իմ տպաւորութեանցս համեմատ, որովհետև այդ ողբերգութիւնը առաջին անգամն է դնվում բեմի վրա։ Ես չեմ կարող չը գովել պ. հեղինակի ոճը, մաքուր լեզուն և ամբողջ դրամայի ընթացքի կապը, բայց մի և նոյն ժամանակ չեմ կարող չափսոսալ որ այդքան աշխատանքը դրած է հարիւր և հազար անգամ դրած ու կրկնած մի յայտնի սկվող և վերջանող ողբերգութեան վրա, որտեղ մի սիրուն դեռահաս աղջկայ ուզում են տալ մի պառաւ մարդու և նա թողնում է իր հօր պալատները ու գնում է բանտը մի սիրուն երիտասարդի մօտ և սուրը տալով նրա ձեռքը ասում է, գնա, քաջ երիտասարդ, ազատիր քեզ և ինձ, և վերջը այս երիտասարդը սպանում է աղջկայ պառաւ ամուսնացուին, հայրը սպանում է աղջկանը իսկ երիտասարդը սպանում է աղջկայ հօրը-Թիւրքաց սուլթանին և այսպէս վերջի գործողութեան ժամանակ թատրոնական բեմը լի է լինում սպանված դիակներով։

Այժմ խօսենք դերասանների մասին։

«Մխիթար Դիւցաղն» ողբերգութեան մէջ Թիւրքաց սուլթանի դերը տուած էր պ. Էնիկալօպովին։ Ոչ մի ժամանակ հայոց բեմի վրա ես չէի տեսած իր դերը այսքան լաւ կատարող դերասան։ Նայելով նրա խաղին մարդ մոռանում էր արդեօք թատրոնական բեմի վրա էր այս բոլորը կատարվում թէ իրականութեան մէջ։ Թէ ընծաներ խոստանալը իր քաջ զօրավարներին, թէ իր աղջկայ ապագան վճռելը, թէ իր կատաղութիւնը լսելիս Մխիթարի խօսքերը, թէ բանդը մանելը և աղջկայ սպանելը, մեռնելը՝ բոլորը ստուգապէս ցոյց էին տալի դերասանի ընդունակութիւնը բեմի վրա։ Մօցիքլի դերն էլ տուած էր պ. Էնիկալօպովին, և այստեղ էլ նա ցոյց տուեց իր բոլոր ընդունակութիւնը այդպիսի մի ծաղրական դերում։

Պ. Թավարբէկեանցի դերերը ծաղրական էին, որտեղ նա ինչպէս «Դիւցաղն Մխիթարի» մէջ նոյնպէս և «Էս էլ ձեզ մօցիքլութիւն» (քաչալ Գէվօ) պիեսայի մէջ կատարեց իր դերերը բաւականին լաւ։ ծաղրական շարժմունքները, գործողութիւնները՝ բոլորը համեմատ տեղին պատճառ էին դառնում մեծ ծափահարութեան։

Այժմ խօսենք օրիորդ Թումանեանցի մասին, որը եթէ չեմ սխալվում, կարծեմ առաջին անգամն է ցոյց տալի իր ընդունակութիւնը հայոց բեմի վրա։ Այդ այն օրիորդն է որի համակրութիւնը և աշխատանքը թշուառ հայերի համար յայտնի է արդէն «Մշակի» պատեալի ընթերցողներին։

«Մխիթար Դիւցաղն» սուլթանի աղջկայ և միւս պիեսայի «Կէկէլի» դերերը տուած էին օրիորդ Թումանեանցին և երկուսումն էլ, մանաւանդ «Էս էլ ձեզ մօցիքլութիւն» պիեսայի մէջ շատ գեղեցիկ կատարեց իր դերը։

Լաւ կատարեցին իրանց դերերը նմանապէս պ. Խալաթեանցը (Դիւցաղն զօրավար) պ. Քալանթարեանը և պ. Աբէլեանցը։ Գեղեցիկ էր և ծաղրական իր դերում պ. Աբգարեանցը կատարելով պիեսայում ծառայի դերը։

Մի խօսքով, կարծեմ առաջին անգամն է որ անց է կենում այսպէս գեղեցիկ և լաւ մի հայոց ներկայացումն Մօսկվայում։ Այդ կարծեմ այն պատճառով որ ուսանողները փոքր առ փոքր մօտիկ ծանօթանալով միմեանց հետ կարողանում են յետոյ լաւ բաժանել դերերը իրանց մէջ։ Կարծիք չը կայ որ ընդունակութիւնը այս կամ այն դերը կատարելու համար չէ տուած ամենին և շատ քիչ կը գտնվին գեղեցիկ կատարողներ ինչպէս սուլթանի դերը ողբերգութեան մէջ, նոյնպէս և մօցիքլի ծաղրական դերը, ինչպէս կատարեց պ. Էնիկալօպովը։

Ներկայացումից յետոյ նշանակած էր պար։ Ինչպէս յայտնի է կարգաւորիչները այդ ժամանակ կպցնում են իրանց կրծքին մի մի բանտ որ մի բան պատահելիս պարողները կարողանան իմանալում դիմել և դոցա թիւը լինում է շատ սակաւ մի կամ երկու, կամ շատ շատ երեք հոգի, իսկ ես տեսնում էի որ շատերը բանտով են, և մինչև անգամ մի քանիսը ունէին կրծքին կպցրած երկու, երեք բանտ։

Բարի գործին ծառայողը միշտ կը գտնի ինչպէս ծառայի իր չքաւոր եղբայրներին և միշտ լինի նրանց համար օգտաւէտ։

Օրիորդ Թումանեանցը ցանկանալով հարստացնել աղքատ ուսանողաց հայոց դրեանքով մատենադարանը պատրաստել էր բաւականին ժա-

պաւէնները և ծախում էր մի մի ռուբլիով, որ այդ գումարով կարելի լինի, ինչպէս իմացայ, ձեռք բերել հայերէն գրեանք ուսանողների համար։ Եւ ինչ կարծիք, որ բոլորեքեանք էլ չտապում էին ցոյց տալ իրանց համակրութիւնը այդ բարի գործին... և ցոյց էին տալի կպցնելով այդ ժապաւէնները կրծքին։ Ինչ կարծիք որ մի այլ կերպով դժուար էր հաւաքել մի գումար այդ նպատակով և ահա իմանալով որ հայը կը սիրէ ցոյց տալ իրան, օրիորդ Թումանեանցը հնարում է այդպէս մի ճարտարամիտ բան։

Թող այս լինի օրինակ ոչ թէ միայն ուրիշ քաղաքների օրիորդներին, այլ մինչև անգամ բարի բան բռնող երիտասարդներին։

Լ. Խ.

Երկրորդ 5% ներքին փոխառութեան տիրաժը որ կատարվեցաւ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ մարտի 1-ին 1878 թ.

500 ռուբլ

№ Սերիի	№ Տոմս.	№ Սերիի	№ Տոմս.	№ Սերիի	№ Տոմս.
18,218	38	13,381	12	1,880	22
2,512	30	9,545	8	9,195	14
359	37	3,340	39	13,676	37
4,781	13	3,394	43	14,057	36
4,094	38	10,235	28	16,655	23
17,147	19	14,477	7	18,718	35
9,872	50	6,021	23	3,823	17
4,529	6	1,074	38	9,622	23
10,506	6	16,963	12	5,853	11
17,103	45	5,360	46	17,668	9
18,372	44	11,469	21	14,739	2
18,865	21	13,089	13	8	31
19,329	16	10,031	31	16,988	37
11,081	12	6,322	4	8,826	33
50	30	8,404	17	2,529	30
7,914	30	16,947	35	7,330	7
15,721	19	19,883	47	17,410	38
4,152	19	3,682	27	18,117	12
13,875	29	723	38	6,836	44
10,537	15	18,054	26	4,970	18
8,933	50	6,947	42	15,128	24
18,654	39	4,755	21	16,232	36
9,370	38	7,567	3	915	4
15,524	49	10,869	10	16,691	41
11,895	29	419	36	3,736	48
7,853	30	14,635	16	16,316	21
6,036	28	3,161	10	11,072	7
5,424	42	14,811	41	8,772	28
8,492	6	16,592	9	19,673	26
15,524	16	18,890	9	13,929	46
9,744	50	7,160	27	17,437	33
1,119	35	14,542	22	16,609	17
17,018	29	5,737	24	2,101	23
663	14	12,406	11	12,797	45
14,285	11	130	13	14,279	15
5,089	26	10,634	18	3,299	1
1,257	13	19,052	13	7,186	24
14,079	24	15,970	3	10,575	29
2,349	23	10,758	20	16,616	30
3,225	11	19,566	36	711	8
14,409	38	7,974	34	6,166	24
11,166	23	15,278	26	7,599	17
1,166	49	16,854	4	12,356	48
3,347	5	1,878	6	4,309	7
2,334	31	592	25	12,648	33
18,785	13	6,147	44	16,546	2
5,378	18	15,351	7	7,726	42
12,536	47	19,572	11	11,106	7
3,049	5	14,969	30	8,506	17
4,239	13	15,610	22	14,048	18
15,095	50	2,150	28	3,205	10
191	48	1,182	32	6,726	25
8,017	20	17,270	48	3,508	49
9,307	8	18,106	32	10,111	33
18,675	23	14,346	31	10,303	20
4,036	50	1,078	25	16,965	48
15,263	6	1,539	3	5,036	40
12,268	2	19,211	22	8,595	46
11,505	47	12,746	8	16,616	33
12,869	27	18,487	47	17,997	45
3,590	48	13,943	30	17,144	28
12,358	47	5,534	41	5,554	50
17,107	17	13,723	41	16,804	30
17,080	10	5,488	3	13,203	25
18,882	45	11,699	39	16,107	45
1,121	9	8,087	33	16,234	28
936	47	2,464	50	17,416	21
16,469	17	4,432	4	2,448	1
17,227	46	19,121	5	686	8
15,236	40	3,440	22	9,707	7
15,714	5	19,348	33	9,179	25
19,285	45	17.364	1	7,239	10
3,090	29	15,558	31	4,418	38
2,955	21	5,047	14	6,268	47
8,803	31	10,124	44	17,216	6
14,125	17	7,744	26	10,542	29
19,936	37	19,578	23	12,695	25
16,991	23	12,312	4	8,042	28
3,990	41	14,535	40	18,932	49
6,333	50	14,791	40	10,318	23
7,315	42	6,769	24	15,368	35
2,468	36	7,163	41	2,954	25
11,588	49	12,802	14	13,128	5
11,985	21	6,559	1	18,955	22
17,325	20	1,516	39	17,871	34
12,668	29	16,234	35	11,998	1
6,712	47	3,724	20		

Հանդած տոմսակների տիրաժը

10,853	10,799	10,492	1,873
3,548	4,071	11,844	6,583
5,232	18,997	7,889	6,221
11,539	7,450	2,104	4,024
13,373	19,672	14,425	5,332
15,726	8,503	18,512	4,933
10,236	14,943	16,764	2,499
14,923	6,395	6,465	16,347
19,297	271	1,067	15,946
9,130	18,260	9,194	15,598
15,824	18,934	19,298	12,330
18,424	10,327	1,342	17,821
2,309	18,812	2,121	12,754
19,254	18,572	19,320	
17,691	657	17,475	

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Հասարակային շինութիւնների մինիստրը առաջարկել է դէպուտատների ժողովում մի երկաթուղի շինել Շատօբրիան գաւառից մինչև Բանն, Ի-յլ-Վիլէն նահանգի գլխաւոր քաղաքը և մի ճիւղ էլ բանալ դէպի Վիտրէ գաւառը։ Բայց որովհետև հակառակ խօսացողներ են եղել, մինիստրը պատասխանել է թէ երկաթուղիները այժմ շատ էժան են շինվում այնպէս որ հարկաւոր է երկաթուղի շինել ամեն տեղեր որոնք առևտրական յարմարութիւն ունեն։ 1851 թ-ին, մէկ կիլոմէտր երկաթուղու շինելը կարժենար 500,000 ֆրանկ. այսօր 2-ից մինչև 3 հարիւր հազար ֆրանկով է շինվում։ Նաև, այս տարի կարելի է միայն հողերը քննել և դնել. իսկ առաջիկայ տարին որ շինութեան աշխատութիւնները կը սկսվեն, խորհրդարանը կարող է խորհել և որոշել թէ ինչպէս հարկաւոր է շինել երկաթուղին, որ աւելի օգտակար և շահաւոր լինի։ Դէպուտատների ժողովը ընդունել է մինիստրի առաջարկութիւնը։

Երեսփոխանների վաւերացման համար վէճերը կը շարունակվին և մայիսի 16-ի մինիստրների դաւադրութիւնները օրից օր երևան գալով, նրանց օրով ընտրված երեսփոխաններից շատերը խարդախութեամբ ընտրված և հետևապէս անվաւեր են վճռվում։ Նիօն գաւառում գաւառապետը պաշտօնական կանդիդատ դ'Օլան կոմսի ընտրութիւնը աջողցնելու համար, հանրապետականների կանդիդատ պ. Ռիկարտին որ Նիօնի քաղաքապետն է, մի անտեղի վէճի համար բանտարկել է տուել որպէս զի չը կարողանայ ընտրվել։ Բայց դ'Օլան կոմսի ընտրութիւնը անվաւեր վճռվեցաւ դէպուտատների ժողովում, 215-ի դէմ 238 ձայնով։

Անցեալ շաբաթ 19 երեսփոխանների ընտրութիւն պիտի լինէր։ Ուրեմն մի քանի օրից յետոյ կիմանանք այդ ընտրութիւնների արդիւնքը։ Շատ հաւանական է որ ընտրված երեսփոխաններից շատերը հանրապետական լինեն։

Փողոցներում լրագիր ծախելու և տարածելու հարցը՝ երկար վիճաբանութենից յետոյ՝ վճռվեցաւ ձախակողմեանների առաջարկութեանը համեմատ և հետևեալ օրէնքը դրվեցաւ. «Ամեն մարդ կարող է աղատօրէն լրագիրներ ծախել և տարածել, պարզապէս մի յայտարարութիւն տալով կամ իր թաղի վարչութեան և կամ գաւառապետին։ Գաւառապետին տրված ժամանակ, լրագիր ծախել ուզողը կարող է մանգալ ամբողջ գաւառում։ Յայտարարութեան մէջ պէտք է նշանակված լինի լրագրավաճառի բնակութեան տեղը։ Կառավարութիւնը կը հաստատէ թէ այդ յայտարարութիւնը ստացած է և այն թուղթը կը ցոյց տայ լրագրավաճառը երբ իրանից պահանջող լինի։

Աջակողմեանները շատ աշխատեցան որ լրագիր ծախելու գործը դժուարացնեն և զանազան կապերով կաշկանդեն, չաջողվեցան։ Առաջարկեցին որ լրագիր ծախել ուզող անձը ֆրանսիացի լինի և ոչ թէ օտարական, որպէս զի լրտեսութիւն չանէ և ճնասակար լրագիրներ և տետրակներ չը տարածէ. քաղաքական յանցանքի համար պատժված չը լինի, բարոյականի մասին վկայված լինի և երբէք բանտարկված չը լինի։ Վերջապէս, լրագրավաճառից պահանջում էին այնպիսի առաքինական կեանք ունեցած լինել, որպիսին չեն պահանջի այդ աջակողմեանները ոչ միայն սենատորից կամ դէպուտատից, այլ և եկեղեցական լինելու անձից։

Անցեալ տարվայ մայիսի 16-ից մինչև դեկտեմբերի 14, տպագրական յանցանքով դատապարտվածներին ընդհանուր ներողութիւն տալու հարցը դեռ չը վճռվեցաւ սենատում։ Այդ ժամանակամիջոցում խմբագիրները և հրատարակիչները 319,000 ֆրանկ տուգանքի են դատապարտվել։ Այդ գումարից 85,000 ֆրանկը արդէն մտել է կառավարութեան գանձարանը։ 98,000 ֆրանկի տուգանքն էլ երաշխաւորված է, բայց դեռ չէ ստացված. որովհետև այդ դրամական տուգանք որոշող դատարանները դեռ իրանց վերջին վճիռը տուած չեն եղել։ Վերջապէս, 319,000 ֆրանկից 136,000 ֆրանկը դեռ չէ վճարված։ Ձախակողմեանները ուզում են որ կառավարութեան գանձարանը մտած 85,000 ֆրանկը յետ դարձվի իրանց տէրերին. իսկ յետադիմական աջակողմեանները հակառակվում են. վիճաբանութիւնը դեռ շարունակվում է սենատում։

Հեռագրական տեսչութիւնը միացնելով փօստերի տեսչութեան հետ, յանձնվել է պ. Կօշըրիին որ կը լինի ֆինանսների մինիստրի վերատեսչութեան ներքև։

Անուանի մատենագիր պ. Էրնէստ Բրնան իրան կանդիդատ է առաջարկում ակադէմիայի անդամակցութեան համար, փոխանակ պ. Կլոդ Բերնարդի որ վախճանվեցաւ։

Ֆրանսիայի աշխարհագրական ընկերութիւնը մի ոսկեղէն մեծ շքադրամ (մեդալ) կընծայէ ամերիկացի ճանապարհորդ Ստանլիին, Աֆրիկայում դժուար տեղեր արած ճանապարհորդութիւնների համար. նոյնպէս մի ոսկեղէն մեծ շքադրամ գիտական և անխոնջ աշխատող պ. Վիվիէն դը Սէն-Մարտէնին որ իր հմտութիւններով և յարատև աշխատութենով նորանոր տեղեկութիւններ է աւելացրած աշխարհագրական գիտութեան մէջ։ Նաև մի արծաթեայ շքադրամ կը տայ Ֆրանսիացի նաւապետներից դօկտօր Հարմանին որ շարունակ հինգ տարի պտտել է Կամբոջ, սիամական Լայօս և Աննամ և այդ երկիրների բնական պատմութեան և աշխարհագրութեան վերաբերեալ հետաքրքրաշարժ տեղեկութիւններ է բերել։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լսումենք որ վախճանված հայ գեներալ Լ. Օրիս-Մելիքովի մարմինը չեն բերում Թիֆլիս, այլ թաղում են Էրզրումի մէջ, որովհետև, ինչպէս լսումենք կառավարութիւնը այժմ արգելել է տիֆով մեռածների մարմինները բերել մեր կողմերը, այլ հրամայել է տեղի վրա թաղել։

***

Այս օրերս կատարվեցաւ ԹԻՖԼԻՍԻ Կուսանանց անապատի եկեղեցու մէջ Մոսկվայի հարուստ Անանովի փետրվարի 19-ին վախճանված որդու Յովհաննէսի յիշատակին հոգեհանգիստ։

***

Մենք ստացանք Փարիզից «L'Exposition Universelle de 1878 Illustrée» (Աշխարհահանդէս 1878 թվ) պատկերազարդ ամսագիրը, որի խմբագիրը պ. Ժիւլ Բրիւնֆօ է (Jules Brunfaut)։ Ամսագիրը կը հրատարակվի աշխարհահանդէսի ամբողջ գոյութեան ժամանակ և կը ծառայէ ներկայացնողների չահերին։ Խմբագրութիւնը լանդրում է մեզ փոխանակել «Մշակը» իր հրատարակութեան հետ։ Մենք արդէն ուղարկեցինք «Մշակի» համարները Փարիզի ամսագրի խմբագրութեանը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

«Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9/21 մարտի «Правит. Вѣстн.» լրագրում հրատարակված են հաշտութեան հիմնական պայմանները, որոնք 29 կէտերից են բաղկացած։ Այդ կէտերի էութիւնը հետևեալն է։ Զերնոգորիայի, Սերբիայի և Ռումինիայի անկախութիւնը ընդունվում է։ Զերնոգորիայի և Սերբիայի սահմանները կուղղվին։ Ռումինեան վարձատրութեան իրաւունք է յայտնում։ Բոլգարիան կը լինի ինքնավարութիւն ունեցող, հարկատու իշխանութիւն, կունենայ քրիստոնեայ կառավարութիւն և տեղական զօրք։ Բոլգարիայի վերջնական սահմանները կորոշէ ռուս-թիւրքաց յանձնաժողովը մինչև ռուսաց զօրքերի Ռումիլիայի մաքրելը։ Բոլգարիայի իշխանին բնակիչները ազատ կընտրեն և նա կը հաստատվի Բ. Դրնից մեծ պետութիւնների համաձայնութեամբ։ Մեծ պետութիւնների թագաւորող տներից ոչ մի անդամ չէ կարող Բոլգարիայի իշխան ընտրվել։ Ֆիլիպօպօլում կամ Տիրնովում հաւաքված անուանի բոլգարացիների ժողովը ռուսաց գործակալի հսկողութեամբ և թիւրքաց գործակալի ներկայութեամբ մինչև իշխանի ընտրելը կը մշակի ապագայ կառավարութեան կանոնադրութիւնը, որ երկրի մէջ մտցնելը կը յանձնվի ռուսաց գործակալին։ Բոլգարիայի տարեկան հարկի քանակութիւնը յետոյ կորոշվի։ Բ. Դուռը պարտաւորվում է մտցնել Կրիտում 1868 օրգանական կանոնադրութիւնը։ Այդպիսի կանոնադրութիւն կը մտցնվի Էպիրոսում, Թեսալիայում և եւրոպական Թիւրքիայի այլ մասներում։ Բէֆօրմներ կը մտցնվեն նոյնպէս Հայաստանում։ Բ. Դուռը կը ների այն բոլոր մարդկերանց, որոնք վերջին անցքերին մասնակցել են։ Պատերազմական վարձատրութիւնը հետևեալն է, 900 միլիոն պատերազմական ծախսեր, 400 միլիոն առևտրական վնաս, 100 միլիոն Կովկասին հասած վնաս, 10 միլիոն ռուսաց հպատակներին Թիւրքիայում հասած վնաս։ Այդ գումարի մի մասի փոխարէն Բ. Դուռը կը տայ Ռուսաստանին հետևեալ երկիրները. Տուլչի սանջակը, որ Ռուսաստանը իրաւունք կունենայ փոխել Բեսսարաբիայի հետ, Արդահան, Բաթում, Ղարս, Բայազէթ։ Բօսֆօրեան և Դարդանելեան նեղուցները թէ խաղաղ և թէ պատերազմի ժամանակ բաց կը լինեն չէզոք պետութիւնների առևտրական նաւերի համար։ Ռուսաց զօրքերը կը մաքրեն եւրոպական Թիւրքիան հաշտութեան վերջնական պայմանը կապելու օրից վեց ամսվայ ընթացքում։ Բոլգարիայում կը մնայ 50,000 հսկող ռուսաց զօրք։ Պայմանագիրը հաստատելուց յետոյ դերիներին կը փոխանակեն։

ՎԻԵՆՆԱ, 7/19 մարտի։ Անդրաշիի ճառից յետոյ ունգարական ժողովը միաձայն քուէարկեց 60 միլիոն գուլդէնի կրեդիտը։ «Pol. Corresp.» լրագրին հեռագրում են Ս. Պետերբուրգից, որ Անգլիայի և Ռուսաստանի մէջ անհամաձայնութիւն կայ, որ կոնգրեսում հաշտութեան պայմանների բոլոր կէտերը քննվին։ Ռուսաստանը ինչքան կարելի է ի նկատի կունենայ այն շարժառիթները, որոնք հակվում են դէպի խաղաղասէր համաձայնութիւը բայց նպատակ չունի դեռ մինչև կոնգրեսի բացվելը հետևել իրան տրվող հրահանգներին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, մարտի 10-ին։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր., երկրորդ 95⅜ ր., երրորդ 95 ր., չորրորդ 95 ր., արևելեան փոխառութիւնը 93¼ ր., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 232 ր., երկրորդ 227 ր. 75 կոպ., պօլուիմպերիալի գինը 7 ռուբլ 70 կոպ., Տրամադրութիւնը բօրսայի մէջ ամուր է։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՈՒՐՍ ԵԿԱԻ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ

1. ԱՂՕԹԱՏԵՍՐ.— *աշխատասիրութիւն Ն. Ֆէր-Յակոբեանց, գինն է.* . . . . . 7 *կոպէկ*

2. ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐԿՏԱԿԱՐԱՆԻ Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑԻ *գինն է* 60 »

Գումարով առնողներին զեղչում կը լինի։

Հրատարակութիւնք **ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ ՀԱՐ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ**

3—4

Կառավարութեան թոյլտուութեամբ այս փետրվար ամսի 18-ից բացվեցաւ ԹԻՖԼԻՍՈՒՄ, *Միքայելեան կամուրջի վրա, Միրզոեվի տանը* № 1, 2, *նոր գրախանութ* «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ» (Центральная книжная торговля) *անունով։ Գրախանութում վաճառվելու են ամենատեսակ գասագրքեր հայերէն, ռուսերէն և ուրիշ լեզուներով. նոյնպէս լինելու է մեծ ընտրութիւն ընթերցանութեան գրքերի։* ԳՐԱԽԱՆՈՒԹԸ *նպատակ ունի իր ճշտութեամբ և ձեռնտու վաճառմամբ նպաստել կրթութեան գործին, մանաւորապէս մեր հայ ուսումնականներին։* ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ *կը ծախվին նմանապէս տեղական պարբերական թերթերը։ Պատուէրները կը կատարվին ամենայն արագութեամբ։ Անփող պատուէրները, մանաւանդ անծանօթ տեղերից, անկատար կը մնան։ Օտար քաղաքացիք կարող են դիմել այս հասցէով* Тифлисъ «Центральная книжная торговля Михайловскій Мостъ, домъ Мирзоева № 1, 2։

ԵՂԲԱՐՔ Ն. Գ. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ
Ս. ՏԷՐ-ԻՍՐԱՅԷԼԵԱՆ

6—10

ԼԱՄՊԱՆԵՐԻ ԵՒ ՆԱՒԹԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ

Որ գտնվում է Գօլովինսկի պրոսպեկտի վրա Բէլօթ տանը, ստացվել է մեծ քանակութեամբ նաւթ առաջին տեսակից Բաքուի առաջնակարգ գործարաններից։ Ծախվում է ֆունտը 13 կոպ., որ քաշի և գնի ճշգրտիւնը ապացուցանելու համար տալիս ենք վկայագիր (կվիտանցիայ)։ Ընդունում ենք նոյնպէս հացնել զանազան պաշտօնական տներում, կազարմէքում, ուսումնարաններում պակասաւոր գներով, վճարը ամսուայ վերջը օտանալով։ Խանութումս գտնվում է շատ տեսակ ԼԱՄՊԱՆԵՐ *և* ԼԱՄՊԱՅԻ ՊԱՏԿԱՆԵԼԻՔՆԵՐ, *որոնց լաւ յատկութեան համար պատասխանատու ենք։ Ծախվում են աւելի* ԱՐԺԱՆ ԳՆԵՐՈՎ *քան թէ առաջ։*

Ա. Լիլիփարեանց

Մէկ երիտասարդ ցանկանում է ունենալ տնեբում ՄԱՍՆԱՒՈՐ ԴԱՍԵՐ *Պատրաստում է նոյնպէս գիմնազիայի* ԱՌԱՋԻՆ, ԵՐԿՐՈՐԴ *և* ԵՐՐՈՐԴ *դասատունների համար Հասցէն կարէլի է իմանալ «Մշակի» խմբագրատանը*

Молодой человѣкъ желаетъ имѣть *частные уроки.* Приготовляетъ дѣтей въ первый, второй и третій классы гимназіи. Адресъ можно узнать въ редакціи „Мшакъ“.

8—8

ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՑԸ *խնդրում է իր* «ԿՈՒՍԾԱՂԻԿ» *վիպասանութեան գործակալներին շտապել բաժանորդագրութիւնները ուղարկելու մինչև ապրիլի մէկն։ Գրքի տպագրութիւնը վերջանում է և ստորագրողաց անունները պէտք է տվվեն գրքի վերջին։*

ԹԻՖԼԻՍԻ *Մասնաժողովը յօգուտ Թիւրքիայից դէպի Անդրկովկաս գաղթականների յայտնում է որ յօգուտ կարօտեալ գաղթականների ընդունվում են ամեն տեսակ հին և նոր շորեր։ Պահեստը գտնվում է Արծրունու քարվանսարայի մէջ։ Նուիրատուները թող բարեհաճեն բերել կամ ուղարկել իրանց այդ նուէրները նախկին Իվանովի այժմ Յովհաննիսեանի ընթերցարանը, Դվորցովի փողոց, Արծրունու առուն, որտեղ և կը ստանան տպված ստացականներ իրանց ընծայաբերութեան համար։*

15—20 (1)

ԹԻՖԼԻՍԻ *Մասնաժողովը յօգուտ գաղթականների յայտնում է որ, դրամական նուիրատուութիւնները յօգուտ գաղթականների ընդունվում են «Մշակ» և «Тифл. Вѣстн.» լրագիրների խմբագրութիւնների մէջ և «Փորձ» հանդիսի խմբագրատան մէջ։ Նոյնպէս ընդունվում են դրամական նուիրատուութիւնները և պ. Զիմթախովի կանտորայում, Շաղինովի քարվանսարայում, (Բազաղիանի տան)։*

15—20 (1)

КОНТОРА ГАЛЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԻԱՅԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

ԲԱՑ Է ԱՄԵՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ 9 *ժամից մինչև* 2 *ժամ*

կէսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ *օրերից։*

Լոյս տեսաւ «ԱՒԱԶԱԿ ՕՏԵՎԻ ԳՈՐԾԵՐԸ» *կամ «Հայրը ցանեց, որդին հնձեց» անունով բրոշիւրան։ Գինն է* 10 *կոպ։ Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով.* Тифлисъ, Вильгельмъ Гроссъ, Столярная фабрика Ф. Зетцера, въ колоніи. *Մենք ինքներս խոստանվում ենք, որ մեր այս առաջին աշխատութիւնը թերութիւններ կունենայ, որովհետև որպէս անփորձ երիտասարդ շտապեցինք շուտով լոյս ընծայել։ Պատրաստ ունենք մի գրքոյկ* «ՈՐԲ ԳԷՈՐԳԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ» *վերնագրով։ Եթէ մեր նիւթական միջոցները կը ներեն, այդ ևս կը նուիրենք հայ գրականութեանը։*

4—8

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՆՈՐ ՍՏԱՑՎԵԼ *են* ՊԱՐՏԻԶԻ ԲՈՑՍԵՐԻ ԵՒ ԾԱՂԻԿՆԵՐԻ ՍԵՐՄԵՐ, *որոնք ծախվում են Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան կոմիսիոներ Լարշէի դէպօում, որ գտնվում է Գօլովինսկի պրոսպեկտի վրա* № 11։

4—10

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ԵՒ ՀԱՇՈՒԵՊԱՀ

Փորձված վաճառականական գործերում, գիտէ կարևոր լեզուները, ցանկանում է տեղ ունենալ, թէ վաճառականի մօտ և թէ ուրիշ ծառայութեան մէջ։ Պատրաստ է և քաղաքից դուրս ծառայել։ Հասցէն։ «Մշակի» խմբագրատանը։

ПРИКАЗЧИКЪ

Опытный, какъ по операціонной, такъ и по письменной части. Знаетъ необходимые языки, ищетъ мѣсто, согласенъ и на выѣздъ. Адресъ: Редакція газеты „Мшакъ“

5—5

Մէկ Սապէօր օֆիցեր ՓՆՏՈՒՄ Է ՊԱՐԱՊՄՈՒՆՔ *(գծեր և պլաններ շինել դասեր տալ)։ Հասցէն հետևեալն է։ Արտիլերիսկայիա փողոց, Յարութիւնովի տուն, զինուորական Գիմնազիայի դէմ, առաջին յարկում։*

3—3

ՄԱՐՏԻ 11. ՏԵՂԵԿԱՑՈՒՑ ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Մարտի 10-ին)	Ր.	Կ.
Ոսկին (պօլուամպերիալը)	7	80
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1350	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1170	—
Վիգրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիչնի »	235	—
Մարսելի կուրսը 270—	270	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	9	15
Վենայի կուրսը ածէ 121 գլ.	100	—
Գաւրեժի բարաթը. . .	5	60
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .		
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօցկու . .	7	80
» միւս տեսակը.	7	70
» չաքարաւաղը.	6	—
» տրանզիտը. .	6	50
» մաքսը վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	7	50
Միւս տեսակը հին սերմից.	6	80
Բուրդը թուշի . . .	7	—
» թարաքամի .	4	—
Ալիւր Շարադալու . .	1	80
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	20
Մոմը ընաճարպի (стеар.)	13	80
Մետաքս Նուխվայ. .	180	—
Կախեթունը. . . .	110	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	35	—
Ֆրիզոնը (լաբը) Ագուլեաց	45	—
Կոֆէն մօկօր. . . .	26	—
» լիվանի . . .	—	—
» մարտինկոյինը	28	—

ՀԵՌԱԳԻՐ	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Ասարիա . . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Նոնդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 բուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 բուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 բուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով.

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլովո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլովո.	1. 29	11. 57
Ռիոն . . .	6. 47	
Փոթի . . .	9. 40	

	առաւօտ.
Փոթիից . .	9. 13
Ռիոն . . .	12. 13
Միխայլովո. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

	1 37	
	4 8	
	7. 56	

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիոն. . .	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փոթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ	Կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . .	70
Եգիպտոս	27

ՊՈՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Վէրմիշեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և ականջի հ. Սօկոլով երեխաների և ներքին հ..

Երեքշաբթի. Վէրմիշեվ ներքին հ. Ռէյխ աչքի հ. Ա. Բախուտով, կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան, Բակատ սիֆիլիտական և կաշու հ.

Չորեքշաբթի. Վէրմիշեվ ներքին հ. Դուբէլիր կրծքային և երեխաների հ. Բակատ կրծքային և ջղային Սօկոլով վիրաբուժական հ.

Հինգշաբթի. Վէրմիշեվ ներքին հ. Կ. Բախուտով, կանանց և ջղային հ. Բակատ վեներական և կաշու հ.

Ուրբաթ. Վէրմիշեվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. Վէրմիշեվ ներքին հ. Դուբէլիր երեխաների և կրծքային հ. Ռէյխ աչքերի հ. Բակատ կրծքային և ջղային հ. Սօկոլով վիրաբուժական հ.

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ՔՈՒԹԱՅԻՍ. Ա. Ք. «Մշակի» համարները ձեր ցանկութեան համեմատ այսուհետև կուղարկենք Փոթի։

—ԵՐԵՒԱՆ. *** Ձեր յօդուածը թատրոնի մասին չենք ստացել, եթէ ոչ մինչև այժմ կը տպէինք, ինչպէս տպում ենք ձեր բոլոր գրուածները։ *** ստորագրութեամբ թատրոնի վերաբերեալ յօդուածը պատահական նամակագրի էր պատկանում։

—ՇԱՄԱԽԻ. Փափախչի Զաղար. Կարծում էք մենք անգործ մարդիկ ենք, որ զբաղեցնում էք մեզ ձեր դարդակախօսութեամբ։ Ձեր քահանան սխալմամբ պաս է կերել ուրբաթ օրը, ինչ կը լինէր, եթէ մինչև անգամ դիտմամբ պաս ուտէր։

—ԲԱԳՈՒ. Ա. Զ. Դեռ չենք կարդացել ձեր յօդուածը։

Дозволено Цензурою 10 Марта 1878 г. Тифлисъ. Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ